ԾԱՆՈՒՑՈՒՄ

ԱՐԱՐԱՏԲԱՆԿ բաց բաժնետիրական ընկերության բաժնետերերի տարեկան ընդհանուր ժողովի մասին

Հարգելի բաժնետեր

ԱՐԱՐԱՏԲԱՆԿ բաց բաժնետիրական ընկերությունը 2020 թվականի հունիսի 25-ին ժամը 11:00-ին՝ ք. Երևան, Պարոնյան 21/1 հասցեում գտնվող ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ Զարգացում մասնաճյուղում հրավիրում է բաժնետերերի 2020 թվականի տարեկան ընդհանուր ժողով:

Ժողովին մասնակցելու իրավունք ունեցող բաժնետերերի ցուցակը կազմվել է 2020 թվականի մայիսի 25-ի դրությամբ:

ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ բաժնետերերի տարեկան ընդհանուր ժողովի օրակարգը կցվում է սույն ծանուցմանը:

Ժողովում քննարկվող հարցերին վերաբերող նյութերին Դուք կարող եք ծանոթանալ ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ վարչական շենքում (ք. Երևան, Բուզանդի փողոց, 87-րդ շենք, թիվ 85), ինչպես նաև համացանցի Բանկի պաշտոնական կայքէջում (www.araratbank.am)՝ սկսած 2020 թվականի հունիսի 8-ից մինչև 2020 թվականի հունիսի 25-ը:

Միաժամանակ սույն ծանուցմանը կից Ձեզ ենք ներկայացնում Ժողովի օրակարգի հարցերի վերաբերյալ քվեաթերթիկը:

Հարգանքով՝
ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ
վարչության նախագահ՝ Միեր Անանյան

<u>Ծանուցում</u>՝ Հարգելի բաժնետեր, հաշվի առնելով նոր համավարակի պատճառով ստեղծված իրավիճակը, ինչպես նաև ՀՀ Պարետի համապատասխան որոշումներով կիրառվող սահմանափակումները, խնդրում ենք տրամադրել Ձեր էլ. փոստի հասցեն (ուղարկելով՝ araratbank@araratbank.am էլ. հասցեին)՝ հետագայում Տարեկան Ընդհանուր Ժողովի հրավիրման և անցկացման պայմանների փոփոխության վերաբերյալ ծանուցումն ապահովելու համար: Միևնույն ժամանակ տեղեկացնում ենք, որ նշված պայմանների փոփոխության վերաբերյալ հայտարարությունը կհրապարակվի Բանկի պաշտոնական կայքէջում: